ՀԱՇԻՒ

ԵՐԵՒԱՆԱՅ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ-ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՐԵՑՓՈԽ ԴԻՄԻՏՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՊԱՊՈՎԻ,

սկսած 21-*ից Ապրիլի անցեալ* 1900 *ամի*
մինչև 1-*ն Յունվարի* 1901 *ամի։*

ԱՍ
Գ 2007
2010

1901
ԵՐԵՒԱՆ, ՏՊԱՐԱՆ ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ
Эривань. Типографія Эм. Теръ-Григорянцъ.

281.6
Ե-81

Арм.
2-357/2
281-6
Ե-81

ՀԱՇԻՒ

ԵՐԵՒԱՆԱՅ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ-ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՐԵՑՓՈԽ ԴԻՄԻՏՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ՊԱՊՈՎԻ,

սկսած 21-ից Ապրիլի անցեալ 1900 ամի
մինչև 1-ն Յունուարի 1901 ամի։

Инв. № 10990

1901

ԵՐԵՒԱՆ, ՏՊԱՐԱՆ ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ
Эривань. Типографія Эм. Теръ-Григорянцъ.

Дозволено цензурою. 10 Января 1901 г.
гор. Тифлисъ.

ЧИУ81-шь.

29413-67

ՅՈՒՅԱԿ

Երևանայ Նորակառոյց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ արդ ու զարդուց նուիրաբերութեանց մասին՝ ըստ իմս խնդրանաց Նորին բարձր Սրբազնութեան Փոխանորդ Սուքիաս Արքեպիսկոպոսը, քաղաքիս բոլոր եկեղեցիներում քարոզել կարգադրեց, որ իւրաքանչիւր նուիրատու առանց ինձ հետ խորհրդակցելու չ՚գնէ իւր նուէրը. առաջին՝ որպէս զի եկեղեցին իւր ընծայաբերուած արդ ու զարդով Հայ՝ եկեղեցու կերպարանք պահպանէ և երկրորդ՝ միևնոյն բանից մի քանի հատ չ՚առնուի ու պիտանի առարկայից զուրկ չ՚մնայ եկեղեցին։ Ահա մինչև հաշուետուութեանս օրը նուիրաբերութեանց մի առ մի ցուցակը, ու նուիրող պարոնների անուն ազգանունը, իսկ թէ առարկան ու նրանց քանակը, չափը, բարձրութիւնը, լայնութիւնը ու արժէքը և թէ ինչ առարկայ ում յիշատակին է ընծայուած, այդ մանրամասնութիւնները գրուած է եկեղեցւոյ զարդ և անօթեղինաց ժապաւինեալ գրքի մէջ։

ԽԱՉԵՐ.

Մի խաչ մեծադիր, արծաթեայ, ոսկեզօծ, նուէր տիկին Ծաղիկ Ազիզեան Բաբայեանից։

Մի ձեռքի խաչ արծաթեայ, Կարապետ Ամիրջանեանից։

Մի խաչ արծաթեայ ձեռքի, տիկին Եղիսաբէթ Մկրտչեան Սիմէօնեանից։

Մի ձեռքի խաչ արծաթեայ պ. Պօղոս Տէր-Զաքարեանից։

Մի խաչ ձողաբարձ արծաթեայ, պ. Յարութիւն Ալէքսանեանից։

Մի խաչ ձողաբարձ արծաթեայ, պ. Ալէքսան Յարութիւնեանից։

Մի մեծ խաչ երկաթեայ ոսկէզօծ, կանգնեցրած եկեղեցու գմբէթի ծայրին, պ Յարութիւն Աստուածատրեան Տէր-Յովակիմեանից։

Մի խաչ արծաթեայ փորամէջ, տիկին Վառվառէ Տէր Յովհաննէսեանից։

Չորս հատ արծաթեայ մանր խաչեր, երկու հատ ոսկեայ մանր խաչեր և մի փոքրիկ արծաթեայ տուփ լի սրբոց մասունքներով իւր արկղիկով, պ. Խաչատուր Տէր-Խաչատրեանից։

ՍԿԻՀՆԵՐ.

Մի մեծ սկիհ արծաթեայ ոսկէզօծ, տիկին Տիրուհի Ղազարեան Ափրիկեանից։

Մի սկիհ արծաթեայ ոսկէզօծ, տիկին Մաղիկ Բաբայեանից։

Մի սկիհ արծաթեայ ոսկէզօծ, պ. Օհաննէս Մնացականեանից։

ՄԱՍՆԱՏՈՒՓԵՐ.

Մի զոյգ միանման մասնատուփ, արծաթեայ ոսկէզօծ, Աւէտիս և Վարդուհի Տէր-Թադէոսեաններից։

ԲՈՒՐՎԱՌՆԵՐ.

Մի բուրվառ ֆուրաժեայ, հասարակ. եկեղեցւոյ փողով։

Մի բուրվառ ֆուրաժեայ, ամրակերտ, նուիրուած տիկին Օլգայ Պապովեանից։

ՔՇՈՑՆԵՐ.

Մի զոյգ քշոց, նուէր պ. Մարտիրոս Մելիք Բաղալեանից։

Մի զոյգ քշոց արծաթեայ, պ. Գասպար Իսահակեան Գասպարեանից։

ՋԱՀԵՐ.

Մի ջահ միջադիր ապակեայ, Տիկին Աննա Թահիրեանից։

Մի մեծ ջահ ապակեայ, պ. Արտեմ Աստուածատրեան Տէր-Յովակիմեանից։

Մի ջահ ֆուրաժեայ, տիկին Մարիամ Գէորգեանից։

Մի ջահ ապակեայ ,պ. Յովհաննէս Թադէոսեանցի յիշատակին։

Մի ջահ միջադիր, տիկին Աննա Մելիքեանից։

Մի ջահ վեց մոմատեղով, տիկին Հռիփսիմէ Անտօնեանից։

Երկու ջահ կանթեղաձև, Գանձակեցի Յարութիւն Ասլանեանից։

ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐ.

Մի մեծ վարագոյր կարմիր կերպասեայ, մեծ սեղանի, տիկին Սալբի Սիմէօնեանից։

Մի փոքր վարագոյր սպիտակ գոյնով, տիկին Մարիամ Յովսէփեան Յովակիմեանից։

Մի վարագոյր կարմիր կերպասեայ, պ. Տիգրան Քօչարեանից, բրոնզիա կամարներով։

Մի վարագոյր, տիկին Շողակաթ Յակովբեան Գարրիէլեանից, նոյնանման։

ԱՇՏԱՆԱԿՆԵՐ.

Երկու աշտանակ. պ. Թովմաս Եսայեանից։

Երկու աշտանակ, պ. Վասիլ Ա. Ղորղանեանից։

Երկու աշտանակ. պ. Սիմէօն Գրիգորեան Աւետիսեանից։

Երկու աշտանակ, տիկին Սօնա Սարգսեան Ամիրխանեանից։

ՄՈՄԱԿԱԼՆԵՐ.

Երկու մոմակալ, տիկին Մարիամ Սանահեանից։

Երկու մոմակալ դեղին պղնձից, N N.

Երկու կերոնափայտ, պ. Տիգրան Տէր-Յովհաննէսեանից։

Երկու մոմակալ, պ. Թորոս Սարգսեանից։

Տասներկու մոմակալներ, Աշոտ և Յովհաննէս Միրզայեանների յիշատակին։

Մի զոյգ մոմակալ, Զէյվեցի պ. Ալէքսան Նաւասարդեանից։

Երեքթեւեան մի փոքրիկ մոմակալ, N N.

ՍԿԻՀՆԵՐԻ ՔՕՂԵՐ.

Մի քօղ սկհւոյ, տիկին Օլինկա Շխեանից։

Մի թաշկինակ սկհւոյ, տ. Մարիամ Ամատունեանից։

Մի քօղ սկհւոյ, տ. Տիրուհի Ղազարեանից։

Մի զոյգ քօղ ձողաբարձ խաչի N N.

Մի քօղ թաշկինակ, տ. Ովսաննա Մկրտչեան Թաղիանոսեանից։

Մի քօղ մեռոնատուփի, տ. Ովսաննա Մելիքեանից։

Մի մեծ քօղ սկհւոյ, տ. Կատարինէ Յովհաննիսեան Գիւլխանդանեանից։

ՍՓՌՈՑՆԵՐ.

Մի մետաքսեայ սփռոց սկհւոյ, պ. Հայկ Նսայեանից։

Մի սփռոց սեւագոյն բամբակից, պ. Յովսէփ Մելիք Աւետիսեանից։

Մի սփռոց կարմիր թաւիշից, տ. Հռիփսիմէ Սաժումեանից։

Մի սփռոց հասարակ դիպայից, տ. Տէր-Յակովբեանից։

Երկու սփռոց կարմրագոյն՝ տ. Սօնա Խաչատրեանից։

Մի մեծ ծածկոց սպիտակ կերպասից, մեծ սեղանի համար, պ. Աղաջան Արշակունուց։

ԹԱՇԿԻՆԱԿՆԵՐ ԱՒԵՏԱՐԱՆԻ.

Մի թաշկինակ, տ. Հեղինէ Այդինեանից։

Մի մետաքսից թաշկինակ, տ. Ալմաստ Հայրապետեանից։

Մի սպիտակ մետաքսից թաշկինակ Գրիգոր Ալոյեանցի յիշատակին։

Մի թաշկինակ, տ. Մագթաղ Սարգսեանից։

Մ թաշկինակ մուգ կանաչ՝ տ. Եղիսաբէթ Սմբատեանից։

Մի թաշկինակ խաչի, պ. Մահտեսի Սամսոն Մկրտչեանից։

Մի մեծ թաշկինակ. NN.

ԺԱՄԱՇԱՊԻԿՆԵՐ.

Տասներկու սպիտակ ժամաշապիկ, պ. Վահան Յարութիւնեան Պոլսոսեանից։

Մի գրակալի շապիկ, պ. Աղաջան Արշակունուց։

Երկու շապիկ վերաբերչի, տ. Սօնա Խաչատրեանից։

Վեց կարմիր շապիկ, պ. Աւետիս Մելիք Աւետիսեանից։ Անգործադիր։

Վեց շապիկ, պ. Լևոն Դաւթեան Անլանեանից։

Մի շապիկ վերաբերչի-արծաթաթել սպիտակ դիպայից, տ. Հռիփսիմէ Մելիք-Քիշմիրեանից։

ՂԵՆՋԱԿՆԵՐ և ՓԵՇԿԻՐՆԵՐ.

Մի ղենջակ մկրտութեան, տ. Կատարինէ Տէր Մարուգեանից։

Մի ղենջակ ժամարարի՝ օր. Եղիսաբէթ Տէր-Մարուգեանից։

ՓՈՐՈՒՐԱՐՆԵՐ և ԲԱԶՊԱՆՆԵՐ.

Երկու միանման փորուրար և բազպան երկու, պ. Գրիգոր Ստեփանեան Ազիզեանից։

Մի փորուրար պլուշից, Գարեգին քահանայ Խաչատրեանից։

Մի զոյգ բազպան ասեղնագործ, տ. Զանեզան Գէորգեան Բաբաջանեանից։

ՇՈՒՐՋԱՌՆԵՐ.

Մի դեղին շուրջառ կերպասից, տ. տ. Սոփիա և Եղիսաբէթ Մելիք Պետրոսեաններից։

ՍԱՂԱՒԱՐԴ.

Մի սաղաւարդ արծաթեայ խաչով և արծաթեայ վալսերով պ. Ադամ Խաչատրեանից։

ՀՈՂԱԹԱՓՆԵՐ.

Մի զոյգ հողաթափ պատարագչի արծաթաթել ասեղնագործ, տ. Զանեզան Բաբաջանեանից։

Երեք զոյգ հողաթափ, եկեղեցու հաշուով։

ՇՈՒՐՋԱՌԻ ԿՈՃԱԿՆԵՐ ԵՒ ԳՕՏԻ.

Մի արծաթեայ ոսկէզօծ խաչաձեւ կոճակ, տ. Աշմաստ Ադամեանից։

Մի արծաթեայ գօտի պատարագիչ քահանայի, տ. Եփրոսինէ Զոհրաբեան Սարգսեանից։

ԽՆԿԱՏՈՒՓ.

Մի պղնձեայ խնկատուփ, Յարութիւն Պապայեանից։

ԿՐԱԿԱՐԱՆՆԵՐ ՈՒ ԿԱՍԿԱՐԱՑ.

Մի կրակարան պարսկական ձեւով, Յակոբ Մահտեսի Շահնազարեանի յիշատակին։

Մի կրակարան, տ. Շուշան Հախնազարեանից։

Մի կասկարայ չուգունից, պ. Յակոբ Խորասանեանից։

ԿՈՆՔ, ԻԲՐՈՒՂ ԵՒ ԱՓՍԷՆԵՐ.

Մի իբրուղ եւ երկու կոնք, եւս հինգ հատ ափսէներ ջնարակած, պ. Աբրահամ Աղամեանից։

Մի կոնք եւ մի իբրուղ գեղին պղնձից նիկելազօծ, պ. Գրիգոր Խէչումեանից։

Մի պղնձեայ կոնք, անագած, պ. Կարապետ Ստեփանեան Յովսէփեանից։

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԳՐՔԵՐ.

Մի աւետարան արծաթապատ, օր. Եղիսաբէթ Տէր Մարուգեանից։

Մի փոքր մաշտոց, տ. Լուսինկայ Տէր-Մելիքսէդեկեանից։

Մի զոյգ ձայնքաղ շարական, պ. Յովհաննէս Բէգնազարեանից։

Մի փոքր մաշտոց, պ. Նիկողայոս Ասլանեանից։

Մի զոյգ մաշտոց արծաթեայ խաչերով, պ. Բարսեղ Սարգսեանից։

Երեք հատ ատենի ժամագիրք, Գանձակեցի պ. Միքայէլ Տ. Անանեանից։

Երկու փոքր աւետարան, Թաղագիւղացի պ. Խաչատուր Մովսէսեանից։

Երկու խորհրդատետր, Կարապետ Նազարեանից։

Մի ձայնագրեալ շարական 60 ր. Գրիգոր աւագ քահանայ Սուքիասեանից։

Մի զոյգ փոքրադիր տօնացոյց և մի զոյգ քահանայաթաղ մաշտոց և-ս մի զոյգ իւղաբերից աւետարան, տ. Ալմաստ Ադամեանից։

Մի ճաշու աւետարան արծաթապատ տ. Աննա Համբարձումեան Թադէոսեանից։

Մի ճաշոց գիրք, տ. Նունէ Պետրոսեան Տիգրանեանից և (Ռոզալիա) Վարդուհի Յովհաննիսեան Անդրիասեանից։

Մի արծաթապատ աւետարան. Գէյրլուեցի որմնադիր պ. Պողոսից։

ՁԱՆԳԱԿՆԵՐ.

Մի զոյգ փոքր զանգակ, պ. Յովսէփ Ռ. Աւետիսեանից։

ԳՈՐԳԵՐ.

Մի մեծ նախշուն գորգ, տ. Աննա Թայիրեանից։

Մի փոքր գորգ, տ. Մարիամ Խանազադեանից։

Մի երկայն գորգ և չորս արկղ Եւրոպական աղիւսներ, տ. Ովսաննայ Ղազարեանից։

Մի հասարակ գորգ, տ. Մագթաղ Մեհրեանից։

Մի հասարակ գորգ, պ. Սարգիս Սահակեան Սարգսեանից։

Մի մեծ գորգ գնուած եկեղեցու շինութեան հոգաբարձուաց ձեռքով, եկեղեցւոյ փողով, տաճարի օծումից յետոյ, 107 ռուբլիով։

Մի գորգ, NN։

Մի մեծ գորգ խորասանի, պ. Կարապետ Թադէոսեան Բաղդասարեանից, Հին—Նախիջևանցի։

Մի դեղնաշորթ գորգ. պ. Աւէտ Միրզոյեանից։

Մի հնոտի դորգ, տ. Խանում Գասպարեան Արծրունուց։

Մի հնոտի երկայն գորգ, տ. Սոփիա Բաբայեան Աղամալեանից։

ԿԱՊԵՐՏՆԵՐ.

Մի մեծ կապերտ, տ. Ալմաստ Խաչատրեանից։

Մի միջակ կապերտ, տ. Գայիանէ Մէլիքեանից.

Երկու միատեսակ կապերտներ, պ. Անդրէաս Տեր-Աստուածատրեանից։

Մի Թաւրիզու կապերտ, տ. Խաթուն Մահտեսի Ղազարեանից։

Մի կապերտ, տ. Մարիամ Աբրահամեանից Հին—Զուղայեցի։

Մի փոքր կապերտ, N N։

Հինգ ու կէս արշին կարմիր մահուդ սեղանի սանդուխտների համար, պ. Գէորգ Խանազադեանից։

ԿԱՀ ԿԱՐԱՍԻՆԵՐ ԵՒ ԱՄԱՆԵՂԷՆՆԵՐ.

Մի երկփեղկեանի գրակալ, պ. Գասպար Մանուկեանից։

Երեք հատ վեց արշնանոց տախտակներ. պ. Սարգիս Ոսկանեանից։

Մի ծալովի փայտեայ սեղան, պ. Ազիզ Ստեփանեանից։

Մի սեղան տախտակ ԵՒ մի գրտնակ, պ. Շահբաղ Մնացականեանից

Երկու նստարան երկաթեայ ոտներով յիշատակ հանգուցեալ Աշոտ և Յովհաննէս Միրզայեաններից։

Մի կախարան և մի ձող, պ. Գէորգ Սաֆարեանից։

Մի գեղեցկադիր կաղամար, պ. Աւէտ և Հայրապետ Միրզոյեաններից։

Մի հաշուէ համարիչ, մատիտներ, ռետին, թանաք, և տողաշար պ. Էմին Տէր-Գրիգորեանից։

Մի պղնձեայ կաթսայ, մի սինի և մի աբիգեարդան, պ. Եղիա Յակովբեանից։

Երկու գրակալներ նոր ձևի, պպ. Պետրոս Մատթէոսեանից և Դաւիթ Դաւթեանից։

Մի գեղեցկաշէն սանդուխտ, պ. Անդրէաս Տէր-Աստուածատրեանից։

Մի երեցփոխանական սեղան, որի փայտեղէնը պ. Բէջան Սարգսեանից, իսկ արհեստագործութիւնը պ. Շմաւօն Միրզոյեանի։

Վեց հատ կախարանների ցիցեր, պ. Յակոբ Աղաջանեանից,

Յինկից երկու մեծ թերթեր և մի կողպէկ պ. Սահակ Տէր-Խսահակեանից։

Մի մեծ փայտեայ արկղ գեղեցկակերտ, եղբարք Թովմաս և Ղևոնդ Բաբայեաններից։

Մի պատի ժամացոյց, պ. Գասպար Աբգարեանից։

Բեմի և մարդկանց միջև վանդակապատը երկաթից, պ. Անդրէաս Տէր-Աստուածատրեանից։

Այր մարդկանց և կանանց միջև եղած երկաթեայ վանդակապատը պ. Յովհաննէս Թադէոսեանից։

Բրոնձեայ մի գրչակալ իր սև մարմարիոնից պատվանդանով, պ. Պետրոս Յովհաննէսեանից։

Մի մեծ կաթսայ պղնձից մատաղի համար, տ. Ովսաննա Ղազարեանից։

Երկու ապակեայ բաժակ (շլիֆ), մի հատ Եւրոպական ջրքամ իւր ափսէով, մի ջրի բաժակ իւր ափսէով և մի նորագոյն ձևի ճախարակ, սեղանի ջահի համար, եկեղեցւոյ արդիւնքով։

ՊԱՏԿԵՐՆԵՐ.

Մի մեծադիր պատկեր Մկրտուիթեան, տ. Մարիամ Ափրիկեանից։

Մի պատկեր Աւետման մեծադիր, տ. Տիրուհի Ափրիկեանից։

Մի պատկեր մեծադիր «Յիսուս գէթսեմանի պարտիզում» պ. Սարգիս Աւետիսեանից։

Մի մեծադիր պատկեր, «Եկայք առիս ամենայն վաստակեալք և ծանրաբեռինք» պ. Յովհաննէս Ազիզեանից։

Մի մեծադիր պատկեր Սբ. Աստուածածնի, եղբարք Միքայէլ և Կոստանդին Կամսարականներից։

Մի մեծադիր Խաչելութեան պատկեր, պ. Ստեփաննոս Ղարիբեանից։

Մի միջադիր պատկեր Սբ. Գրիգոր Լուսաւորչի, պ. Արամ Բուենեաթեանից։

ԽԱՉՎԱՌՆԵՐ.

Երկու ձողաքարձ խաչվառներ, պ. Գասպար Գասպարեանից։

ԴՐԱՄԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՔ.

		Մանեթ.
	Փոխանորդ թեմին Երևանայ Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց . .	185
Պ.	Իսահակ Մելիք-Աղամալեանց . .	100
„	Սամսոն Տէր Իսահակեանց . .	25
„	Արամ Բունիաթեանց . . .	25
„	Գրիգոր Ամիրեանց . . .	50
„	Առաքել և Տիգրան Ափրիկեաններ .	200
	Տիկին Նունէ Տիգրանեանց . . .	25
„	Ռոզալիա Անդրիասեանց . . .	25
Պ.	Գաբրիէլ Մնացականեանց . .	25
„	Երուանդ Ափրիկեանց . . .	50
„	Աւէտ Միրզայեան . . .	20
„	Գէորգ Պապիկեանց . . .	2
„	Սարգիս Աւետիսեան . . .	20
„	Խաչատուր Աւետեանց . . .	25
„	Յարութիւն Թադէոսեանց . .	5
„	Գաբրիէլ Աբրահամեանց . .	25

		Մանէթ.
„	Դաւիթ Խոջամիրեանց . . .	3
„	Պ. Կոնդուրալեան . . .	15
Տիկին	Վառինկայ Թադէոսեանց . .	5
Պ.	Լեւոն Ամիրխանեանց . . .	10
„	Յովհաննէս Տէր-Եսայեանց . .	5
„	Ղազար Տէր-Պօղոսեանց . . .	1
„	Նարալեանց	1
„	Մ. Մարգարեանց	3
„	Գէորգ Գէորգեանց . . .	10
„	Սամսոն Ղարաղաշեանց . .	3
„	Գարուշ Բաբաջանեանց . .	6
„	Պօղոս Շահբաղեանց . . .	1
„	Մնացական Մնացականեանց . .	1
„	Վաղարշակ Բարոյեանց . . .	1
„	Ամբակում Գէորգեանց . .	3
„	Սամսոն Շահնազարեանց . .	3
„	Ղազար Բաբաջանեանց . . .	10
„	Օհան Տէր-Օհանեանց . . .	1
„	Միքայէլ Միքայէլեան . . .	1
„	Համբարձում Մալխասեանց . .	3
„	Գէորգ Դաւթեան . . .	1
„	Գրիգոր Համազասպեան. . .	3
„	Հայկ Տէր-Յովհաննիսեան . .	1
„	Տիգրան Անտոնեան . . .	1

		Մանէթ.
„	Գ. Թորոսեանց	3
„	Աղէքսանդր Գէորգեանց . .	25
„	Արամ	3
„	Յոհաննէս Մէլիքեանց . . .	10
„	Աբգար Բաբայեանց . . .	3
„	Բարսեղ Աւետիսեանց . . .	10
„	Օհան Դիլանեանց	5
„	Յակովբ Խորասանեանց . . .	3
„	Արտաշէս Գաբրիէլեանց. . .	20
„	Խաչատուր Գէորգեան Արիստակէսեանց	10
„	Յովհաննէս Նալբանդեանց . .	10
„	Կարապետ Ափրիկեանց . . .	25
„	Արամ Տէր-Աւետիսեանց . . .	10
„	Աղէքսանդր Յակոբեան . . .	5
„	Յովհաննէս Նազարէթեանց . .	3
„	Գասպար Գասպարեանց . .	25
„	Խ. Դիլանեանց	5
„	Անդրէաս Տէր-Աստուածատրեանց .	3
„	Բժիշկ Յ. Յովհաննիսեանց . .	5
Տիկին	Իւղաբեր Գալուստեանց . .	5
„	Հռիփսիմէ Մ.-Քիշմիրեանց . .	10
	Գումարն է . .	1097

Եկեղեցւոյ տօմետներով սալահարկ շինելու 15 հատ մեծ և փոքր բողէտկէքով և չորս կողմի հաշիւէքով ամեն մի դասին առանձին առանձին . .	1799 ր. 66 կ.
Ժամկոչի տան վարձ Ապրիլի 22-ից հինգ ու կէս ամսուայ .	15 ր. —
Խաչկալ շինելիս գերաններին, մեխերին և այլ ծախսեր . .	21 ր. 14 կ.
Եկեղեցին բարեզարդելու և զանազան իրեղէններ առնելու և շինել տալու ծախք . .	426 ր. 47 կ.
Գումարն է	4450 ր. 25 կ.

ԵԿԵՂԵՑՈՑ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

Մի այգի Շէնգաւիթ գիւղում, 1900 թ. Նոյեմբեր ամսին կապալով տրուեց պ. Յարութիւն Յովհաննէսեանցին 6 տարի ժամանակով, տարեկան 60 ռուբլի։

Մի հասարակ տնակ փոքրիկ բակով Շհար թաղում հին հոգաբարձութեան օրից տարեկան 26 ռուբ. վարձով է տրուած։

ԵԼՔ

Ելքը գրուած է 204 № և եղել է 4450 ր. 25 կ.

Եւ ով ինչքան փող է ստացած ամենքից վերցրած է ստացական մանրամասն նշանակելով գնած իրեղէնները։

Եկեղեցոյ պաշտօնեաներին Ապրիլի 22-ից մինչև Դեկտեմբերի 23-ը 1900 ամի . . .	291 ր.
Հանգուցեալ Զաւահիր Մելիք Շահնազարեանցի մահից առաջ և թաղմանը . . .	350 ր.
Պ. Նոտարիուսին կտակ գրելու և հաստատելու ուրիշ ծախսերի համար	49 ր. 30 կ.
Ութ փութ 33 ֆ. մոմ, որից երկու փթի չափ էլ մնում է արկղում չ'վաճառուած .	374 ր. 46 կ.
Ներկարարներին . . .	100 ր. —
Վեց հատ պատկերի ճանապարհածախքով հանդերձ, նորանց կախտալու և վրաները յիշատակ գրելու (պ. Վարդգէս Սուրէնեանցի նկարները) .	939 ր. 20 կ.
Եկեղեցւոյ տօնին մատաղի ծախք	83 ր. 92 կ.

Տիկին Մարիամ Ափրիկեանից .	200	—
Պ. Սարգիս Ոսկանի Աւետիսեանից	150	—
— Յովհաննէս Ազիզեանից .	150	—
— Ստեփան Վարդանեան Ղարիբեանից	150	—
— Միքայէլ և Կոստանդին Կամսարականներից . . .	150	—
— Խաչատուր Գիլանեանից լուսագին	3	—
— Գրիգոր Խեչումեանից լուսագ.	1	—
Եկեղեցապատկան տան վարձ կէս տարուայ . . .	13	—
Եկեղեցու շինութեան հոգաբարձուներից. . . .	7	43
Ծախած հին գերանների, տոմեսի արկղների և արքատի փող .	30	70
Եկեղեցու չորս գանձատուփերից երկու անգամ բացարած եկեղեցոյ պաշտօնէյից ներկայութեամբ	13	84
Ձանազան մանր եկամուտներ .	44	52
Ապառիկ մնացած անցեալ 1899թ. այգու կապալառուից . .	20	—
Գումարն է . .	2939	41
	+ 1097	—
	4036	41

ՄՈՒՏՔ·

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հաշուէ տոմարի մատեանով, մուտք եղել է 2939 ր· 41 կ· գրուած 118 № սկսեալ Ապրիլի 22-ի երեկոյից 1900 ամի ց Յունվարի 1.

Ապրիլի 22-ից երեկոյից մինչև Յունվարի 1-ը 1901 ամի ծախուել է մոմ · · · (ծախուած մոմի հաշիւը գրուել է շաբաթէ շաբաթ)։	1060 ր·	21 կ·
Եկեղեցու օծմանը՝ քաւորներից·	85	—
Պսակ և մկրտութիւն կատարուել է 39 հատ, որոնցից 15 կոպէկից մինչև 1 ր· ստանալով լուսագին, ստացուել է ·	21	50
Մատաղի փող, պ· Անդրէաս Գալստեանի, Սարգիս Բաբասեանի և Աղաջան Արշակունու ձեռքով · · · · ·	164	21
Ի յիշատակ Թովմաս Խուդաբաշեանի · · · ·	200	—
Ի յիշատ· Նունէ Գիւղալեանցի·	50	—
— Օր· Մարիամ Անանեանցի	200	—
Պ. Աղաջան Թաղիանոսեանից ապառիկի մնացած· · ·	24	—
Տիկին Տիրուհի Ափրիկեանից ·	200	—

Եկեղեցոյն կից բակը (16 արշին × 100 արշին) կտակած հանգուցեալ տիկին Զաւահիր Մելիք Շահնազարեանից, որը շուտով կ'հաստատուի եկեղեցու վերայ։

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ ԱՊԱՌՆԻ ՍՏԱՆԱԼԻՔ։

Տիկին Ովսաննա Ղազարեանից 500 ռուբլի։

Օրիորդ Մարիամ Անանեանցի յիշատակին 600 ռուբլի։

Հանգուցեալ Աւետիս Տէր-Յովակիմեանից կտակած 500 ռուբ. եկեղեցու զանգակների համար, մնում է կտակակատար Թադէոս Թայիրեան Քալանթարեանցի մօտ։

Արծաթեայ աղաւնի Կոստանդին Արտեմիչ Իւզբաշեանից։

Երկու հատ «խնկատուփ» տապանակ ուխտիի ձևով արծաթեայ Գաբրիէլ Աբրահամեանից։

Միւռոնատուփ արծաթեայ NN։

Եկեղեցւոյ արևմտեան դրան քարաշէն հոյակապ զանգակատունը կիսից աւելի աւարտուած, սկսուած անցեալ տարուայ Յուլիս ամսում, շինվում է պ. Եագոր Տէր-Իսահակեանցի

ծախքով՝ ճարտարապետ Վասիլ Զոհրաբիչ Միրզոյեանցի հսկողութեամբ (ձրի)։

Ս. Սեղանի երրորդութեան մեծ պատկերը։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1900 ամի 23 Դեկտեմբերի և կրկին 21 Յունվարի 1901 ամի ներքոյ ստորագրեալ Երևանայսը Լուսաւորիչ եկեղեցւոյ հաշուատեսներս քննելով պ. երեցփոխ Դիմիտր Պապովի ներկայութեամբ եկեղեցու մուտքը սկսած 22 ից Ապրիլի մինչև 1 Յունվարի 1901 ամի մատենում 117 № գումարաւ 4036 ռուբ. 41 կոպ. և ելք սկսած 21-ից Ապրիլի 1900 ամի մինչև 1 Յունվարի 1901 ամի № 204. գումարաւ 4450 ռուբ. 25 կոպ. Դատնք ուղիղ և դուրս գալով մուտքը ելքից, եկեղեցին մնաց պարտ պ. երեցփոխ Պապովին 413 ռուբլի 84 կոպ. որոյ համար ստորագրում ենք՝ Գաբրիել Մնացականեանց, Տիգրան Ափրիկեանց և Գրիգոր Ամիրեանց։

ԱՊԱԳԱՑ ԱՆԵԼԻՔ.

Պիտի վճարել հանգուցեալ Մելիք Շահնազարեանի ժառանգներին 1000 ռուբլի։

Ձեռք բերել եկեղեցւոյ բակին կից բակը, որի մասին բանակցութիւնները սկսուած են արդէն։

Ներկել եկեղեցին ամբողջովին ցեմենտի կրասկայով դեղին վարդագոյն։

Եկեղեցւոյ պատերի չորս շուրջը՝ մի սաժէն լայնութեամբ ծածկել ասֆայլտով, եկեղեցին խոնաւութիւնից պաշտպանելու, թէ կտուրից կաթող խոնաւութիւնից և թէ ժամաւորների հարթ տեղ շրջելու համար։

Եկեղեցւոյ բակի չորս կողմը տնկել երկու շարք երեք տարեկան լորենու ծառեր։

Եկեղեցւոյ բակի երեք կողմը երկաթէ վանդակներով շրջապատել։

Եկեղեցւոյ բակի յարմարաւոր տեղում, շինել մատուռ, հանգուցեալների մարմինը գիշերը եկեղեցուց այնտեղ տեղափոխելու համար։

Ժամկոչի և հերթապահ քահանայի համար յարմարաւոր սենեակներ շինել։

Եկեղեցին ներկել Էմալովի սպիտակ ներկով ներսից։

Եկեղեցւոյ հիւսիսային և հարաւային դռների առաջ՝ շինել գեղեցկավայել նախագաւիթներ։

ԵՐԵՑՓՈԽ Դ. ՊԱՊՈՎ.

(134)

M ~~2 109~~
2-35